2. ԳԱՌՆԻԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Գառնիում բացի բերդի ամրակուռ պարսպից, հեթանոսական հոյակապ տաճարից, որոնք հայտնի էին վաղուց, և սլեղումներով բացված հին հայկական հուշարձաններից (մոգայիկ հատակով բաղնիք, անհիկ ժամանակաշրջանի այլ շենքերի հեաքեր և այլն), կան նաև միջնադարյան ըաղմաթիվ հուշարձանների ավերակներ, կամ նրանց մնացորդները[1]։

Վաղ ֆեոդալական ժամանակաշրջանին են պատկանում երկու եկեղեցի և մի դերեզմանոց հնատիպ տապանաքարերով։ Դրանցից հնագույնը Գառնիի բաղիլիկ եկեղեցին է (տախտ. I), որը միանավ, բայց հարավից արտաքին սրահ ունեցող կառուցվածք է եղել[2]։ Դեռևս պարզված չէ, թե արտաքին սրահը քանի սյուն կամ մույթ է ունեցել, սակայն, արևելյան կողմում գտնվում է սրահի թաղտկապ խորանը, որը մասամբ պահպանվել է։ Եկեղեցին այժմ խիստ ավերված է. համեմատաբար լավ են պահպանվել հյուսիսային, մասամբ և արևելյան պատերը, իսկ հարավային և արևմտյան պատերը կործանվել են։ Մասնակի պեղումներով կարելի կլինի ճշտել եկեղեցու հատակագիծը։ Այս բաղիլիկ եկեղեցին Գառնիի հնագույն քրիստոնեական հուշարձանն է. որի ավերակները հասել են մեզ. այն կարելի է թվագրել IV—V դարերով։ Եկեղեցու շուրջը գտնվում են նաև միջնադարյան և նոր ժամանակների դերեզմաններ, իրենց տապանաքարերով։

Վաղ ֆեոդալական ժամանակաշրջանի հաջորդ հուշարձանը՝ սլեղումներով հայտնաբերված բոլորաձև քառախորան, կենտրոնակմբեթ եկեղեցին է (նկ. 1), որը կառուցվել է VII դարում։ Եկեղեցու չորս խորանները կազմում են շրջանակի մեջ առնված խաչի չորս թևերը, որոնց միջև ղեռեղված են չորս փոքրիկ սենյակ-ավանդատներ[2]։ Եկեղեցին աեղադրված է Գառնիի հեթանոսական տաճարին կից՝ նրա արևմտյան կողմում։ Եկեղեցու պատուհանների պսակները քանդակազարդ են եղել (նկ. 1բ)։

VII դարի սբ. Սիոն անունով եկեղեցու վերաբերյալ վկայություն պահպանվել է 1346 թ. մի ձեռագրի հիշատակարանում, որտեղ ասված է. «Ի հայոց թուին ՃԼ շինեցաւ սուրբ Սիոն ի Կուրապաղատին ի վերայ Գառնոյ հողահա-

---

1 Գառնիի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ պարապում է արշավախմբի ճարտարապետ Ա. Սահրնյանը, սակայն միջնադարյան Գառնիի մասին որոշ գաղափար կազմելու համար անհրաժեշտ ենք համարել դեթ ժամանակագրական կարգով թվարկել այդ հուշարձանները։

2 Материалы по археологии Кавказа 13-րդ հատորում բերված է այդ եկեղեցու հատակագիծը, որտեղ թյուրիմացաբար այն ցույց է տրված որպես երկնավ կառուցվածք (էջ 32)։



Նկ. 1ա. Հատակագիծ քառախորան եկեղեցու (VII դ.)



Նկ. 1բ. Նույն եկեղեցու պատուհանի պատակ

ային, տէր Ներսէսի հրամանաւ[1] (Հայոց ՃԼ 130—551=681 թվականին շինվեց սբ. Սիոնը Կուրապաղատի կողմից Գառնո հողահատի վրա տեր Ներսեսի հրամանով)։

Այս վկայությունը վերաբերում է արդյոք քառախորան եկեղեցուն, թե սչ գժվար է ասել, սակայն, ժամանակով շատ է համապատասխանում նրան։

Գառնի ամրոցի դիմաց սուսքից շուրջ 300 մետր դեպի հյուսիս, մի փոքրիկ բարձրունքի վրա գտնվում են դերեզմանը մնացորդները, որտեղ կանգնած է Կարտնիդն թագուհու 879 թ. կրող խաչքարը (տախտ. II) և մի քանի այլ խաչքարեր, որոնց վրա փորագրված խաչերը իրենց ձևերով և արվեստով կարող են թվագրվել VIII—IX դարերով։ Դրանք փորագրված են ամրոցի առաջին դարի, բայց արարների ձեռքով ավերված պարսպից տարված քարերի վրա։

Իր ժամանակին այս դերեզմանոցում է գտնվել նաև ամրոցի շինության վերաբերյալ Տրդատ թագավորի թողած արձանագրությունը կրող քարը, որը հանել տարել են պարսպի վրայից և վրան քանդակել VIII—IX դարերի համար ընորոշ խաչ։ Այս բլրի վրա ընկած է նաև ոմն Մխիթարի և Զարա տիկնոջ հիշատակին 1211 թ. կանգնեցված մի խաչքար։

Գառնիում ավելի բազմաթիվ են XII—XIV հետագա դարերի հուշարձանների մնացորդները։ Դրանցից առավել աչքի է ընկնում մի փոքրիկ կենտրոնաղմբեթ եկեղեցի, կառուցված բազալտ քարից XII դարում[2] (տախտ. III)։ Ավանդաբար այդ եկեղեցին կոչվում է «Մաշտոց հայրապետ», 897 թ. վախճանված և Գառնիում թաղված Մաշտոց կաթողիկոսի անունով։ Սակայն շենքի և նրան կից հուշարձանների վրա փորագրված արձանագրություններից երևում է, որ այդ եկեղեցին կոչվել է Սուրբ Աստվածածին, իսկ XIV դարում նաև Սումպենց վանք, հավանաբար նրանից ոչ հեռու գտնվող եկեղեցիների հետ միասին։ Այս կենտրոնաղմբեթ եկեղեցու բակում կան բարձր արվեստով քանդակված խաչքարեր, որոնցից մեկը կրում է 1200 տարեթիվը։ Եկեղեցու կողքին, համարյա նրան կից կառուցված է նաև մի մահարձան, որը առանձին կանգնած խորշի տեսք ունի՝ մեջը ագուցված խաչքար և ծածկված եռկթեռ սանիքով (տախտ. IV)։ Մահարձանի եռևի հարթ մասի վրա փորագրված են կարևոր բովանդակություն ունեցող նվիրատվական և այլ արձանագրություններ։

Ամրոցի ներսում հեթանոսական տաճարի հյուսիս-արևմտյան անկյան դիմաց և քառախորան եկեղեցուն կից գտնվում է վերևում հիշատակված փոքրիկ մատուռը, մեջը Մաշտոց կաթողիկոսի տապանաքարը, որի վրա արձա-

---

1 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ա. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 352։ Այս վկայության մեջ եկեղեցու շինության թվականը ցույց է տրված 681 թ. և ասվում է, թե տեր Ներսեսի հրամանով է կառուցվել։ Հավանաբար ակնարկվում է Ներսես Տայեցին, որը մեռել է ցույց տրված թվականից շուրջ քսան տարի առաջ՝ 662 թ., ուստի ՃԼ թվականը ուղղելի է ՃԸ (659)։ Այս ուղղումով վերացվում է նաև մի անհամապատասխանություն. վկայության մեջ ասվում է «Շինեցաւ սուրբ Սիոն ի Կիւրապաղատինս»։ Այս արտահայտությունը կարելի է հասկանալ, թե եկեղեցին շինվել է Կուրապաղատի կողմից կամ նրա ժամանակ (ուղղելով Կուրապաղատին բառը Կուրապաղատէն ձևով)։ 681 թ. Հայաստանում իշխում էր Գրիգոր Մամիկոնյանը, որը Կուրապաղատի տիտղոս չի ունեցել, մինչդեռ 659 թ. Հայաստանում իշխում էր Համազասպ Մամիկոնյանը, որը Կուրապաղատ տիտղոսը ստացել էր բյուզանդական Հուստինիանոս III կայսրից։

2 Այս եկեղեցու պատկերը հրատարակված է Ալիշանի կողմից. Տե՛ս Այրարատ, էջ 362։

-նագրված. է «ի ՅԽԶ (897) ԹՎ. ՔՍ. ՓԽՅ ՏԷՐ ՄԱՇՏ (346(=897) թվականին ի Քրիսաոս փոխագրվեցավ (մեռավ) Տեր Մաշտոցը)»։ Մաուռի առջև կան հարթ սապանաքարեր, որոնցից մեկը արձանագրություն ունի։

Գյուղամիջում գանվող և այժմ կանգուն եռանավ բազիլիկ եկեղեցին, նույնպես կոչվում է սր. Աստվածածին և կառուցված է ուշ միջնադարում հին եկեղեցու ավերակների վրա։ Այս եկեղեցու բակում կան մի քանի խաչքարեր և սապանաքարեր, իսկ հյուսիս-արևելյան անկյան գիմաց բարձր պատվանգանի վրա կանգնած մնում է Գառնիի ամենագեղեցիկ քանդակներով զարդարված, 1291 սարեթիվը կրող խաչքարը՝ հեսաքրքիր արձանագրությամբ։

Գյուղի հարավ-արևելյան ծայրում պահպանվում են միանավ բազիլիկ եկեղեցու և սրան կից, նույնպես բազիլիկ ձևի մաուռի ավերակներ։ Երկուսի ծածկերն էլ չեն պահպանվել։ Նրանցից քիչ հյուսիս գանվում են խորշաձև և երկթեք ծածկով մահարձանի ավերակները։ Դրանք բոլորն էլ XIII—XIV դարերի կառուցվածքներ են երևում։ Այս մահարձանի, բազիլիկ եկեղեցու և մաուռի շուրջը փռված է մի ընդարձակ գերեզմանոց, որտեղ հնաղույն թաղումները պատկանում են XIII—XIV դարերին, իսկ հիմնականում գա ուշ միջնադարյան գերեզմանոց է, որի շարունակությունը կազմում է գյուղի այժմյան գերեզմանոցը։

Միջնադարյան մի ընդարձակ գերեզմանոց, փռվում է գյուղի հյուսիս-արևմտյան կողմի բլուրների վրա։ Մեծ բլրի արևմտյան ծայրին մնացել են բոլորաձև, ոչ մեծ մաուռի կամ գմբեթաձև դամբարանի (արամագիծը 4,85 մ) հիմքերը։ Դրանից քիչ արևելք պատվանգանի վրա կանգնած է պատրոն Սարգսի 1195 թ. կրող խաչքարը (տախտ. V), ավելի արևելք ընկած է ոմն Ասիլի խոշոր խաչքարի վերին մասը։ Այս գերեզմանոցում գտնվում են XIII—XIV դարերի բազմաթիվ խաչքարեր և սապանաքարեր, որոնցից մի քանիսի վրա արձանագրություններ են փորագրված։ Խաչքարեր և սապանաքարեր գանվում են նաև այս մեծ բլուրից դեպի արևելք ընկնող ցածրագիր բլրի վրա։

Գյուղի հյուսիս-արևելյան ծայրում՝ բլրի վրա պահպանվում են սր. Հեղինե մատուռի մնացորդները, իսկ նրա կողքին մի այլ շենքի, հավանաբար գմբեթավոր մաուռի մնացորդները։ Այս մաուռների շուրջը կա ոչ այնքան ընդարձակ մի գերեզմանոց՝ սապանաքարերով և խաչքարերով, որոնցից մեկի վրա կարդացվում է Գրիգոր որդի Մաուրի, իսկ մաուռի մեջ, որը ավերվելուց հետո պրիմիտիվ ձևով շարված է անսաղ քարերից, գրված են խաչքարեր, որոնցից մեկի վրա փորագրված է «Ես Վարդս կանգնեցի»։

Գյուղի հյուսիս-արևելյան թաղում մի փոքրիկ բլրակի վրա, որտեղ սեղագրված է Օգերեութարանական կայանը, կան միջնադարյան գերեզմաններ, իսկ բլրի հարավային սարոռում պատահարար բացվել է գինու մառան, մեջը հինգ կարաս։ Բլրից քիչ դեպի հյուսիս-արևմուտք պահպանվում են մի մատուռի մնացորդները, որի մեջ դրված են խաչքարեր։

Գյուղի հարավ-արևելյան թաղում պահպանվում են Թուխ-Մանուկ անունով մի մաուռի և Զորավոր անունով մի շենքի մնացորդները։

Միջնադարյան գերեզմանոցներ կան նաև ամրոցի գիմաց՝ արևելյան ձորում և ամրոցից արևմուտք գտնվող բարձունքի վրա։

Աղաա գետի ձորում, ամրոցից քիչ դեպի արևմուտք, ուղղահայաց ժայռի սարոռում գանվում է Աղջկարերդ կոչվող քարայրը, որի հետ կապված է մի

ավանդություն, թե այդտեղ բանտարկված է եղել Տրդատ թագավորի աղջիկը կամ թույրը։ Այս ավանդության համար կարող էր հիմք ծառայել Ստեփանոս Օրբելյանի վկայությունը Գառնո ձորի քարայրում առանձնացած երաժիշտ և բանաստեղծուհի Սանակադուխտ կույսի մասին։ Այս քարայրը, որի միջից ոլորյուր է բխում, հարմար է որպես դիտակետ ձորից եկող ճանապարհի վրա հսկելու, ինչպես նաև իբրև տպաստարան թշնամուց պատսպարվելու համար։ Ընդարձակ քարայրի առջև, դեռևս հին ժամանակներում, պատ է կանգնեցվել, որի հետքերն են երևում տեղում, իսկ այժմ կանգուն մնում է քարով ու կրով կառուցված մի աշտարակաձև պատ պաշտպանության համար թողնված ակնոտով։ Այս պաարը կարող է կառուցված լինել ոչ շուտ քան XVI դարում, երբ սկսեց գործադրվել հրադենը։

Գառնիի միջնադարյան աշքի ընկնող հուշարձաններից է գյուղի արևելյան ծայրում Ագատ գետի վրա կառուցված հին կամուրջը, որը կամարակապ թռիչքով իրար հետ է կապում գետի երկու ժայռոտ ափերը (տախտ. VI)։ Կամուրջը պետք է, որ XI դարում կառուցված լինի, մանավանդ նրա վրայով է անցնում դեպի Հավուց թառ և Ագատ գետի ձախ ափի դարավանդում ու ձորերում գտնվող հին բերդը և բնակավայրը տանող միակ ճանապարհը։ Հայտնի է, որ Հավուց թառի վանքը հիմնվել է XI դարում և նրա շինության համար տուֆ քարը տարվել է այս ճանապարհով, քանի որ վանքի մերձակայքում տուֆ քար չկա։ Կամուրջը հետագայում ենթարկվել է վերանորոգման, պահպանելով, սակայն, իր նախկին ձևը։

Գառնի գյուղից 2 կիլոմետր հյուսիս-արևմուտք բլրի գագաթին գտնվում են սբ. Սարգիս մատուռի ավերակները, որոնց շուրջը երևում են մի քանի հին տների մնացորդներ։ Հավանաբար սա այն գյուղատեղին է, որը հայտնի է սուրբ Սարգիս անունով։ Բնակարանների ավերակներին կից կա նաև մի գերեզմանատուն վատ մշակված քարերով։ Դրանցից մեկը խաչքար է, որը կանգնեցրել է ոմն Մխիթար ՈՂԵ (1246) թվականին։ Բնակատեղին ևս կոչվել է սբ. Սարգիս, որը Գառնիի մերձակայքում հիշատակվում է Հավուց թառին պատկանող գյուղերի թվում՝ Կոխդ (այժմ Գոդթ) գյուղի հետ միասին՝ 1487 թ. վերևում հիշատակված կալվածագրում[1]։

Գյուղից 3 կմ դեպի հյուսիս կիկլոպյան բերդի մեջ գտնվող մեծ ժայռի վրա փորագրված են խաչեր, իսկ նրանից ավելի հեռու դեպի հյուսիս-արևմուտք, սարի ստորոտին խաչքար է կանգնեցված մի քարայրի առջև։

Գյուղի մեջ մի շարք տների պատերի և բակը շրջապատող ցանկապատերի մեջ ինչպես և գործող դերեզմանոցում հանդիպում են միջնադարյան շենքերին պատկանող ջատ քարեր՝ սյուների խարիսխներ, քիվերի և որմնասյուների բեկորներ և այլն։

Գառնի գյուղի տարբեր մասերում պահպանվող միջնադարյան հուշարձանների մնացորդները, բնակելի շենքերի, կարասների, մառաններ, տեղ-տեղ երևացող հիմքերը գյուղի տերիտորիայում թափթփված միջնադարյան իլեցեղենի, ապակեղենի բեկորները, այսպես, այնտեղ պատահարար գտնվող առանձին դրամներն ու դրամական դանձերը և այլ հնագիտական իրերն ու առարկաները մի կողմից թույլ են տալիս պարզելու միջնադարյան Գառնի գյուղաքաղաքի սահմանները, մյուս կողմից օգնում են որոշ պատկերացում

---

[1] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 277։

ունենալու միջնադարյան այդ գյուղաքաղաքի վերաբերյալ։ Պարզ երևում է, որ գյուղաքաղաքը բռնել է մի տարածություն, որի սահմանները կազմել են արևելքից՝ գյուղի հյուսիս-արևելյան ծայրին գտնվող հորդառատ աղբյուրները և նրանց փորած ձորը, որը միանում է Ազատ գետի ձորին, արևմուտքից՝ ամրոցի դիմաց ընկնող հարթությունը, հարավից՝ գյուղաքաղաքը եղերվել է Ազատ գետի ձորով, իսկ հյուսիսից՝ այսպես գտնվող բլրաշարքով և հեղեղատի հունով։ Եթե նկատի ունենանք, որ միջին դարերում տները դասավորված էին լինում չափազանց խիտ, իսկ փողոցներն էլ շատ նեղ էին, ապա պարզ կլինի, որ Գառնի գյուղաքաղաքի բռնած տարածության վրա կարող էր բնակվել շուրջ 4—5 հազար մարդ, որը ավելի կլիներ գյուղի բնակիչների այժմյան թվից 1—2 հազարով։

Ամրոցում կատարված պեղումների ընթացքում արշավախումբը հայտնաբերել է միջնադարյան բնակելի և անտեսական նշանակություն ունեցող բազմաթիվ շենքերի մնացորդներ։ Այդ շենքերից մեկը բաղկացած է երկու ոչ մեծ դահլիճից և այլ կից սենյակներից։ Դահլիճի ծածկը հենվել է սյուների վրա, որոնցից պահպանվել են առանձին սյուների խարիսխները։ Իբրև խարիսխ, օգտագործվել են բազալտե վեցանկյունանի բեկորներ, որոնք սայլվում են բնության խաղով, առանց լրացուցիչ մշակման։ Նման քարեր շատ կան Ազատ գետի ձորում, մանավանդ վերը նկարագրված կամուրջի դիմաց գտնվող մեծ քարայրում։ Դահլիճներից մեկն ունի աղյուսաշար խորշ (տախտ. VII)։ Մնացած բնակարանները փոքր չափերի են (տես չափագրությունների տախտակը)։

Այս միջնադարյան շենքերի մնացորդների ուսումնասիրությունը թողնելով ճարտարապետ մասնագետներին, պիտի բավականանք նշելով միայն երկու հանգամանք։ Միջնադարյան շերտերում բացված շենքերը բացի քառախորան եկեղեցուց, պատկանում են հիմնականում երկու ժամանակաշրջանի՝ XII—XIV դարերին և XV—XVII դարերին։ Դրանց հիմքերը դրված են կուլտուրական շերտերի լիցքի մեջ, սակայն, տարբեր մակարդակների վրա։ Քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ XV—XVII դարերի շենքերի հիմքերի տակ դրանվում են XII—XIV դարերի թոնիրներ, կարասներ, պատեր, բազմաթիվ իրեր ու առարկաներ, մանավանդ շերտերը լցով թվադրող շնարակած խեցեղեն և դրամներ։

Շինարարական տեխնիկայով երկու շերտի շենքերն էլ հար և նման են իրար՝ կառուցված են ճեղքված անտաշ քարերից, կավե շաղախով և պատած են եղել նույնպես կավե սվաղով։ Սակայն ամրոցի տարբեր մասերում XIII դարի վերամինյան տիպի մի իտշաձև շքաղյուսի և XIV—XV դարերի ութանկյուն աստղաձև ու այլ ձևի շքաղյուսների բեկորների գյուտը ցույց է տալիս, թե ամրոցում եղել են նաև շքադյուսներով զարդարված շենքեր։

Մինչև այժմ պեղված է ամրոցի մի փոքր մասը և դժվար է ասել, թե հայտնաբերված շքագյուսները, որոնք գտնվել են տարբեր կետերում, լիցքի հողի մեջ, պատկանում են այն շենքերին, որոնց մնացորդները բացվել են, թե այլ կառուցվածքների, որոնց մնացորդները կբացվեն ապագայում։

Գառնիի միջնադարյան շենքերի համար բնորոշ է բազմաթիվ թոնիրների և կարասների առկայությունը։

Արդեն կատարված պեղումներով պարզված է, որ միջին դարերում, մանավանդ XIV—XVII դարերում Գառնի ամրոցը շատ խիտ կեբպով բնակեց-

ՀԱՏԱԿԱԳԻԾ

ԳԱՌՆԻՈՒՄ ՊԵՂՎԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ

Մասշտաբ 1:200

12-14 դդ. ՇԵՆՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ

15-17 դդ. ՇԵՆՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ

ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ՊԱՐԻՍՊԸ

ված է եղել, տները կպած են եղել իրար, փողոցներ դեռևս չեն բացվել, եթե չհաշվենք խիստ նեղ նրբանցքների հետքերը։ Շենքերի շատ խիտ դասավորությունը բնորոշ է միջնադարյան բոլոր բնակավայրերին, սակայն, Գառնի ամրոցի տերիտորիայում բնակարանների առավել խիտ դասավորությունը բացատրվում է և այն հանգամանքով, որ XV—XVII դարերի ուշտական արշավանքների ու ասպատակությունների ժամանակաշրջանում Գառնի ավանի բնակչության մի մասը տեղափոխվել էր ամրոցի ներսը, այդ ասպատակություններից պատսպարվելու նպատակով։

XVI—XVII դարերում ամրոցի պարիսպը մասամբ քանդված-ավերված էր, բայց դեռևս չէր կորցրել իր պաշտպանական նշանակությունը, իսկ ամրոցի հրվանդանը արևելքից և մանավանդ հարավից պաշտպանված էր խորախոր ձորերով։

Ամրոցում եղել են նաև տնտեսական նշանակություն ունեցող շենքեր՝ մառաններ, դինու հնձաններ, գետնի մեջ փորված և գաճով լավ սվաղած դինու հորեր, որոնք ցույց են տալիս, թե Գառնին այգեգործության և գինեգործության աչքի ընկնող կենտրոն է եղել։

Ամրոցի ամենավերին շերտի (XV—XVII դդ.) բնակելի շենքերի պեղումների ժամանակ կարելի էր նկատել նրանց հանկարծակի ավերված և կողոպտված լինելը, որ երևում է մի քանի բնակարաններում կարասների մեջ պահպանված ալյուրի փոքրաքանակ պաշարների մնացորդների առկայությունից։ Դրանով հաստատվում են աղբյուրների տեղեկություններն այն մասին, որ 1638 թ. Գառնին ավերվել է թուրքերի ձեռքով և ամայացել։

XV—XVII դարերի շերտի պեղումները միաժամանակ ցույց են տալիս, թե Գառնիի բնակիչները մեծ մասը քարշ էր տալիս ծայր աստիճան աղքատիկ կյանք։

Ամրոցի հյուսիս-արևելյան մասում պարսպից քիչ ներս բացվել է սալահատակ, որը եզերող պատերի հետքերը հաղիվ են նկատվում։ Սալահատակի համար օգտագործվել են տապանաքարեր և ավերված շենքերից վերցված շինաքարեր։ Ինչպես երևում է, այստեղ, XVI դարում աղոթատուն կամ մատուռ է կանգնեցված եղել, քանի որ նման սալահատակները բնորոշ են այդ տիպի շենքերին։

Գառնի ամրոցում կատարված պեղումների ժամանակ, բացի բնակելի և տնտեսական շենքերի մնացորդներից, հայտնաբերվել են մեծ քանակությամբ միջնադարյան խեցեղենի, ապակեղենի բեկորներ, մետաղե իրերի և առարկաների մնացորդներ, քարե սանդեր, աղորիքներ և այլ հնագիտական նյութեր։

Ամենից ավելի առատ են հասարակ և զնարակած խեցեղեն իրերը և նրանց բեկորները, քանի որ կավե անոթները վերին աստիճանի լայն կիրառություն ունեին բնակչության կենցաղում, իսկ նրանց մնացորդները լավ են պահպանվում հողաշերտերի տակ։ Գառնիի պեղումներով հայտնաբերված խեցեղենի ուսումնասիրությամբ զբաղվում է արշավախմբի աշխատանքից, պատմական գիտությունների թեկնածու Գրիգոր Կարախանյանը, որի համառոտ աշխատությունը հրապարակվում է ներկա պրակում։ Գառնիում պեղումների ժամանակ և պատահականորեն, գտնվել են զգալի թվով դրամական գանձեր և առանձին դրամներ, որոնց ուսումնասիրությունը ձեռնարկել է Հայաստանի Պետական պատմական թանգարանի աշխատակից, դրամագետ

Խ. Մուշեղյանը։ Միջին դարերին վերաբերող մնացած հնագիտական նյութերը ամփոփված են ներկա պրակում։

Գառնին պատկանում է այնպիսի հնավայրերի թվին, որտեղ կյանքը շարունակարար դոյություն է ունեցել հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը, չհաշված շուրջ 200-ամյա ընհատումը՝ XVII—XVIII դարերում։ Նման հնավայրի պեղումների ժամանակ երևան են գալիս տարբեր դարաշրջանների իրար հաջորդած մշակույթի հետքերը։ Այդ հանդամանքը թույլ է տալիս դաղափար կազմելու տարբեր դարաշրջանների մշակութների և նրանց առանձնահատկությունների մասին, առավել կամ նվազ հստակությամբ պարզելու տարբեր մշակութների շերտագրությունը, դրանց թվադրությունը և հաջորդական փոխանցումները, իսկ դա մեծ կարևորություն է ներկայացնում Հայաստանում հայտնաբերվող հնագիտական առարկաների և նյութերի բնույթը և ժամանակը պարզելու տեսակետից։

Ինչ վերաբերում է Գառնիի միջնադարյան շերտերին, ապա պետք է ասել, որ հայտնաբերված է երեք կուլտուրական շերտ՝ վաղ ֆեոդալական, զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի (IX—XIV դարեր) և ուշ ֆեոդալական՝ կամ XV—XVII դարերի շերտերը, այդ դարաշրջաններին պատկանող շենքերի, քարե, կավե, մետաղե և այլ նյութերից պատրաստված իրերի և առարկաների մնացորդներով։

Գառնիի IX—XIV դարերի կուլտուրական շերտում հայտնաբերված հնագիտական նյութերը, թեև չեն կարող մրցել Դվինի և Անիի նույն ժամանակաշրջանի շերտերից հայտնաբերված հնագիտական խիստ առատ ու բազմակողմանի իրերի հետ, ոչ իրենց քանակով և ոչ էլ արվեստով ու որակով, սակայն, կարևոր են գյուղաքաղաքի կամ փոքր քաղաքի բնակչության նյութական արտադրության ու կենցաղի ուսումնասիրության համար, ինչպես և ամրոցի ու գյուղաքաղաքի կապը մեծ քաղաքների հետ պարզելու տեսակետից։ Ինչ վերաբերում է Գառնիի ուշ ֆեոդալական ժամանակաշրջանների կուլտուրական շերտերում հայտնաբերված հնագիտական նյութերին, ապա դրանց նշանակությունը բավականաչափ մեծ է այն պատճառով, որ Անին այդ դարաշրջաններին վերաբերող նյութեր չափազանց քիչ է տվել, իսկ XVI—XVII դարերի նյութեր դրեթե չի տվել։ Իսկ Դվինում կյանքը ընդհատվել է XIII դարում, ուստի այս քաղաքի պեղումները նյութեր չեն տալիս ուշ միջնադարի վերաբերյալ։